ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՈԳԵԲԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քրեակատարողական ծառայության Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր հոգեբան (այսուհետ՝ Գլխավոր հոգեբան) (ծածկագիր՝ 12-2-ՔՀ6-Մ2-8):

1.2.Ենթակա և հաշվետու է

Գլխավոր հոգեբանն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր հոգեբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր հոգեբաններից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Էջմիածին, Չոբանքարա

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է այցեր հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին.
2) դատապարտյալների դիմումների հիման վրա կատարում է կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելություն և իրականացնում մասնագիտական խորհրդատվություն.
3) իրականացնում է Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունելություն.
4) իրականացնում է հսկողություն Հիմնարկում հաշվառման վերցված անձանց հետ տարվող աշխատանքների նկատմամբ
5) իրականացնում է հոգեբանական և բացատրական աշխատանքներ Հիմնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած անձանց հետ

Իրավունքները՝

1) համապատասխան ստորաբաժանումներից պահանջել դատապարտյալների և կալանավորված անձանց վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն

2) ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ բաժնի պետին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների վերաբերյալ.

3) համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին.

4) ծանոթանալ դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին.

Պարտականությունները՝

1) կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին.

2) կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը.

3) տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ.

4) տեղեկացնել Բաժնի պետին հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին կատարած այցերի արդյունքների մասին.

5) կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին.

6) կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3.	Ենթաոլորտ	Հոգեբանություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հոգեբանության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Բարեվարքություն
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Ծրագրերի մշակում

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

1.1. Աշխատանքի կազմակերպական և ղեկավարման շրջանակը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

1.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

1.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: